ՊԱՐԳԵՎ ԲԱՐՍԵՂՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵՐԸ

(2000-2005 թթ.)

Հայ Եկեղեցու նորագույն շրջանի պատմության կարեւորագույն իրադարձությունների շարքում առանձնանում են Հայոց Հայրապետի հովվապետական այցերը Եկեղեցու տարբեր թեմեր եւ նվիրապետական կենտրոններ: Վերջին հարյուր տարվա պատմական իրադարձությունները, այդ թվում՝ կորուստների, հետապնդումների, զրկանքների ու մաքառումների խորհրդային շրջանը, էապես թուլացրել էին Հայաստանում Մայր Եկեղեցու հասարակական դերակատարությունը եւ գործառնական նշանակությունը, որը միանգամայն օրինաչափորեն հանգեցրել էր նաեւ հայկական սփյուռքում Մայր Աթոռի դերի ու նշանակության նվազմանը: Խորհրդային կայսրության փլուզումը եւ Հայաստանի անկախության վերականգնումը նոր դարաշրջան բացեցին ոչ միայն հայոց պետականության կայացման եւ զարգացման, այլեւ՝ Հայոց Եկեղեցու սասանված հեղինակության վերականգնման, ազգային արժեքների վերարժեւորման ու մատուցման համար: Այդ շարակարգում հատկապես պետք է արժանին մատուցել Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ խորհրդային վերջին եւ ՀՀ անկախության առաջին տարիների ակտիվ եւ բեղմնավոր գործունեությանը: Վազգեն Ա. Հայրապետի գործունեությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Հայ Եկեղեցու հեղինակության բարձրացման, հավատավոր ժողովրդի՝ դեպի Եկեղեցի վերադարձի համար: Ի. դարավերջի եկեղեցական կյանքի եւ գործունեության զարգացմանն ուղղված այս քայլերն իրենց հետագա ընթացքը գտան Գարեգին Ա. Հայրապետի օրոք: Վերջինիս ընտրությամբ նոր պայմաններ ստեղծվեցին Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, Սփյուռքում Մայր Աթոռի հեղինակության բարձրացման եւ Անթիլիաս-Էջմիածին հարաբերությունների կարգավորման համար: Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացումն ու կատարելագործումը Արցախյան պատերազմում հաղթանակած, զարգացման ուղին բռնած նորանկախ պետականության հզորացման եւ կայացման համար նոր հորիզոններ բացեցին: Միաժամանակ պարարտ հող ստեղծվեց Եկեղեցի-պետություն

հարաբերությունների նոր մակարդակ արձանագրելու եւ զարգացման անդարձ ուղի նախանշելու համար:

Ի. դարավերջին՝ հայոց պետականության համար ծանր պայմաններում հայրապետ ընտրված Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին վիճակված էր ականատեսը լինելու եւ դառնալու գործուն դերակատարներից մեկը հայոց նորագույն շրջանի դժվարին եւ իրադարձություններով հարուստ պատմության: Շարունակելով նախորդ հայրապետների կիսատ թողած գործը՝ Վեհափառ Հայրապետը կարողացավ կարճ ժամանակահատվածում ակտիվ գործունեություն ծավալել ի նպաստ Եկեղեցու եւ պետության հզորացման ու զարգացման: Նոր դարաշրջանի մարտահրավերներին ընդառաջ՝ Գարեգին Բ.-ի գլխավորությամբ Հայ Եկեղեցին ԻԱ. դար մուտք գործեց որպես ազգային հզոր եկեղեցական կառույց, որի անբաժան մասն են Հայրենիքի եւ Սփյուռքի համայնքները: Ահա այս միասնականության հրամայականով էլ պետք է դիտարկել Վեհափառ Հայրապետի հովվապետական այցերը, որոնք, ըստ էության, կարելի է գնահատել եւ արժեւորել մի քանի տեսանկյունից՝ կրոնական, կրթամշակութային, պետական, քաղաքական, միավորիչ եւ այլն:

Այս առումով բավականին հետաքրքիր է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ 2000-2005 թթ. հովվապետական այցերի վերլուծությունը: Դրանք, ըստ էության, բազմաբնույթ են եւ դժվարությամբ են ենթարկվում համակարգային մոտեցման: Սակայն ակնհայտ է, որ դրանք Հայոց Եկեղեցու պատմության մեջ աննախադեպ են, քանի որ Գարեգին Բ.-ն արդեն իսկ Հայ Եկեղեցու պատմության մեջ կարող է մնալ իբրեւ ամենաշատ հովվապետական այցեր կատարած Հայրապետ: Իհարկե, այդ գնահատականը միակողմանի չպիտի հնչի, քանի որ միայն այցելությունների թվաքանակը գնահատման արժանիք չէ. կարեւոր է նաեւ դրանց բովանդակային կողմն ու արդյունավետությունը, քանզի յուրաքանչյուր այց ունի որոշակի նպատակ, ուղղված է որոշակի բնույթի եւ բովանդակության խնդիրների լուծմանը եւ հայ ժողովրդի ու Եկեղեցու միասնության կարեւորագույն գրավականներից է:

Գարեգին Բ. Հայրապետի հովվապետական այցերն անբաժան մասն են կազմում Հայ Եկեղեցու հոգեւոր, մշակութային, ազգային-պետական գործառույթների իրականացման ու իրագործման, որոնք ակնհայտ են դարձնում Եկեղեցու կարեւորագույն հատկանիշները եւ ազգային նկարագիրը: Հայոց հիմնախնդիրներով ապրող եւ ազգային միասնականության ամրապնդմանը նախանձահույզ Եկեղեցու միավորիչ գործառույթի վառ արտահայտությունն են Վեհափառ Հայրապետի հովվապետական այցերը, որոնք բխում են ազգային շահերից եւ ուղղված են միասնության ամրապնդմանը, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների կատարելագործմանն ու զարգացմանը:

2000-2005 թթ. հովվապետական այցերի քննական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ դրանց մի մասն ունի հայրենասիրական բնույթ եւ Եկե-

ղեցու կրոնամշակութային ու դավանանքային գործառույթներից զատ, ուղղված է հասարակության հայրենասիրական ոգու բարձրացմանը, պետություն-Եկեղեցի փոխհարաբերության ամրապնդմանը: Այդ այցերը Եկեղեցու միավորիչ եւ ազգահավաք գործառույթի իրագործումն են: Այդպիսի այցերից է, մասնավորապես, Վեհափառ Հայրապետի՝ 2000 թ. հովվապետական այցն Արցախի թեմ: Ազատագրված նորանկախ Արցախի համար այդ այցն ազգային զարթոնքի եւ պետականության կերտման գործում նաեւ Եկեղեցու մասնակցության ու դերակատարության յուրահատուկ ամփոփում էր, հայ ժողովրդի եւ ազգային Եկեղեցու միասնականության, հայրենանվեր գործունեության գնահատական: Պատահական չէ, որ Վեհափառ Հայրապետի խոսքում հայ ժողովրդի ազատագրական պայքարն ու Հայոց Եկեղեցու վերազարթոնքն ընկալվում են իբրեւ մեկ ամբողջություն. «Մենք հավատում ենք, որ հայրենյաց հողին հեղված մեր սիրելի զավակների արյունից պիտի վերընձյուղվեն, պիտի ծլարձակվեն նոր շիվեր՝ ի դեմս անուշիկ, քաղցր, գեղեցիկ մեր մատաղ սերնդի, այս փոքրիկ երեխաների, որոնք պիտի զան նույն ոգով կանգնելու հայրենյաց պաշտպանության սրբազան գործի պատվանդանին եւ կերտելու Հայոց զորեղ Հայրենիքը, Հայոց զորեղ երկիրը՝ Հայաստան եւ Արցախ իր աշխարհներով»[36]: Միաժամանակ Վեհափառի խոսքը ներկայացնում է հայ հոգեւորականի կերպարի եւ առաքելության հավաքական բնութագիրն ու գնահատականը. «Մենք մեր գնահատանքն ենք բերում մեր հոգեւորականներին, որոնք մեր ժողովրդի զավակաց կողքին, ծանր ու դժվարին ժամանակներում՝ պատերազմի, հրանոթների որոտյունի ներքո իրենց առաքելության, իրենց ծառայության նվիրական սուրբ գործին լծված՝ աշխատում էին մխիթարություն բերել, աշխատում էին ոգեւորություն, խանդավառություն, աննկուն ոգի հաղորդել մեր ժողովրդի զավակաց»[37]:

Վեհափառ Հայրապետի՝ Արցախի թեմ հովվապետական այցի հայրենասիրական եւ ազգային բնույթի դրսեւորումն են հատկապես Մարտունի, Ճարտար, Սոս, Սխտորաշեն, Ամարաս, Հեր-Հեր, Խնածախ, Վանք ու Գանձասար այցելությունները: Այս բնակավայրերը պատերազմական գործողությունների թատերաբեմ հանդիսացած եւ հերոսական մաքառումների միջով անցած այն վայրերն են, որոնցում առավելագույնս են դրսեւորվել հայրենասիրական ոգին, ազատատենչությունը, ժողովուրդ-Եկեղեցի միությունն ու միասնականությունը: Շարակարգում ակնհայտ է, որ այդ բնակավայրերի ընտրությունը պատահական չէ, այլ՝ երախտիքի յուրահատուկ դրսեւորում ու գնահատական Մայր Եկեղեցու կողմից:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցերի մի մասն էլ ունի միջեկեղեցական հարաբերությունների կարգավորման, զարգացման ուղղվածություն եւ իրականացվել է հիմնականում քրիստոնեությունը պե-

36 «Էջմիածին» ամսագիր, 2000, Թ., էջ 20:
37 Անդ:

տական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում: Դրանցից պետք է առանձնացնել Վեհափառ Հայրապետի այցելությունը Եգիպտոս ու Եթովպիա[38]: Այդ այցերը հայ-դպտական եւ հայ-եթովպական բարեկամական բազմադարյա հարաբերությունների պատմության մեջ նոր էջ բացեցին՝ նպաստելով Քույր եկեղեցիների հարաբերությունների հզորացմանն ու ամրապնդմանը: Դրա լավագույն վկայություններից է Հայոց Հայրապետի եւ Ղպտի Եկեղեցու առաջնորդի ստորագրած համատեղ կոմյունիկեն[39]: Եգիպտոս այցի շրջանակներում Հայ Եկեղեցու միջազգային հեղինակության կարեւոր գրավականներից է նաեւ Գարեգին Բ.-ի հանդիպումն Ալ Ազհարի Շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուի հետ, որի ընթացքում «Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց արաբ ժողովրդին՝ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած եղբայրական վերաբերմունքի, ինչպես նաեւ հետագա ջերմ հարաբերությունների համար»[40]:

Եգիպտոս եւ Եթովպիա, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու այլ թեմեր այցերի շարակարգում հատկապես կարեւորվում են հայ համայնքի հետ հանդիպումները, որոնք Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման որակական նոր ուղենիշներ են ձեւավորում: Մասնավորապես եգիպտական համայնքի հետ հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորում է «յուրաքանչյուր հայի կապվածությունը Հայրենիքին՝ նշելով, որ Հայաստանի իրենց քույրերն ու եղբայրները բազում զրկանքներ են կրել վերջին տասը տարիներին, բայց եւ այդ զոհաբերությունների ու դժվարությունների հաղթահարման արդյունքում ունենք անկախացյալ Հայաստան եւ հաստատուն ու ամուր ոգով լցված, Հայրենիքի զորացմանն ու շենացմանը լծված զավակներ»[41]:

Միջեկեղեցական հարաբերությունների զարգացման որակական նոր հարթություն էր հատկապես Հայոց հովվապետի՝ 2000 թ. նոյեմբերյան այցը Հռոմ, որի նպատակն էր Հովհաննես-Պողոս Բ. պապի հետ հանդիպումը եւ Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները Հայաստան տեղափոխելը: Այս այցը կարեւորվում էր նաեւ գիտակրթական նշանակությամբ, քանի որ Հայոց Հայրապետն իր մասնակցությունն էր բերում Արեւելյան եկեղեցիների աստվածաբանությանը, պատմությանը, ծիսագիտությանը նվիրված գիտական սիմպոզիումին:

Հայրենիք-Սփյուռք կապի ամրապնդմանն ու որակական նոր հարաբերությունների կայացմանը միտված հայրենանվեր գործունեության, Հայոց Եկեղեցու հզորացմանն ու զարգացմանն ուղղված կարեւորագույն այցերից են նաեւ Հայոց Հայրապետի այցելությունները Ռումինիա, Ֆրանսիա, Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, Ավստրիա, Բուլղարիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Մեծ Բրիտա-

38 «Էջմիածին», 2000, Ժ., էջ 4:
39 Անդ, էջ 15-17:
40 Անդ, էջ 14:
41 Անդ, էջ 9:

նիա, Ֆինլանդիա եւ Հարավային Ամերիկա: Բազմազան եւ բազմաբնույթ այս այցելություններն ակնհայտորեն շեշտում են Հայ Եկեղեցու միջազգային եւ միջեկեղեցական գործուն դերակատարությունը, նրա նկատմամբ համաքրիստոնեական հարգանքն ու ակնածանքը, որի խոսուն վկայություններից է Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ Թեոկտիստ Պատրիարքի գնահատականը Հայոց Եկեղեցուն՝ «Քրիստոնեությանը ամենամոտ կանգնած Եկեղեցի»[42]:

Գարեգին Բ.-ի հովվապետական այցերի շարակարգում պետք է հատուկ ուշադրության արժանացնել նաեւ առանձին կազմակերպված ուխտագնացությունները Դեր Զոր եւ Երուսաղեմ: Իհարկե, դրանք ըստ նշանակության եւ բնույթի տարբեր են, սակայն հայոց ազգային եկեղեցական կյանքում նշանակալից տեղ ու դերակատարություն ունեն:

Այսպիսով՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2000-2005 թթ. հովվապետական այցերի համակողմանի եւ ամբողջական վերլուծությունը թողնելով հետազա սերունդներին՝ կարող ենք փաստել, որ դրանք ոչ միայն իրենց քանակով, այլեւ որակական առումով աննախադեպ են եւ Հայոց Եկեղեցու նորագույն պատմության մեջ արձանագրվում են իբրեւ եկեղեցական կյանքի զարգացմանը, Եկեղեցու դերակատարության բարձրացմանը, պետություն-Եկեղեցի, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին եւ միջեկեղեցական կապերի ամրապնդմանն ուղղված՝ դեպի ապագան միտված հզոր քայլեր:

РЕЗЮЕ

Статья о пастырских визитах Католикоса Всех армян Гарегина II-ого является попыткой проанализировать и оценить их в контексте основных функций церкви. Важными проявлениями деятельности первых годов Гарегина II-ого являются пастырские визиты 2000-2005 гг., анализ которых выявляет их некоторые особенности. Эти визиты рассматриваются как конкретные шаги по реализации определенных функций церкви. В результате анализа конкретных примеров и событий среди этих функций выделяются несколько из них. Некоторые пастырские визиты Гарегина II-ого имеют духовный, культурный и национально-государственный характер и являются проявлениями объединяющей функции церкви и национального единства. Из этих визитов особенно подчеркнуто важность визита в Арцахскую епархию. Некоторая часть пастырских визитов расматривается и оценивается с точки зрения урегулирования и развития межцерковных отношений. С этой точки зрения обсуждаются также визиты в рамках торжеств посвященных 1700-летию

42 «Էջմիածին», 2000, Թ., էջ 13:

правозглашения христианства государственной религией в Армении, и встречи с лидерами различных церквей, в том числе с Папой Римским.

SUMMARY

The article analyzed the pastoral visits of His Holiness Garegin II Catholicos of All Armenians and attempts to assess and evaluate them in the context of the basic functions of Church. One of the basic characteristics of the activities of His Holiness Catholicos Garegin II after the succeeding years of his election are his pastoral visits and the analysis of which reveals several specifics of his activities. These visits are viewed as concrete steps towards the implementation of certain functions of the Armenian Church. These functions include specific examples with the analysis of specific events. Garegin II's pastoral visits had spiritual, cultural, and national context and are the manifestations of Church's uniting and nation-collecting functions. Among these visits was highlighted the pastoral visit to Artsakh Diocese. A large part of pastoral visits are observed and evaluated in terms of regulation and development of inter-church relations. From this point of view the visits implemented in the framework of 1700 years anniversary of adoption of Christianity as State religion and meetings with leaders of various churches, including the Roman Pope.